



Յուլիս 13, 2017թ

Յարգելի պարոն (տիկին) քաղաքապետ,

Յայնրիս Բլոլ Յիմնադրամը և Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնը համատեղ կազմակերպում են ցուցահանդես և անվճար դասընթացներ Հայաստանի տարբեր շրջաններում: Այս միջոցառումների շարքը կազմակերպվում է Կայուն Էներգետիկայի Ակադեմիայի շրջանակներում, որն ունի արդեն երկու տարվա պատմություն: Այս տարվա ակադեմիայի թեման է «Վերականգնվող Էներգիա և Էներգաարդյունավետ լուծումներ»:

Միջոցառումները տեղի կունենան՝

- Յյուսիսային տարածաշրջան. **Վանաձոր** - հուլիսի 22
- Կենտրոնական տարածաշրջան. **Արարատ** - հուլիսի 29
- Յարավային տարածաշրջան. **Կապան** - օգոստոսի 5

Միջոցառումների համառոտ օրակարգ՝

- ցուցահանդես. վերականգնվող Էներգիա և Էներգաարդյունավետ լուծումներ
- մեկօրյա ինտենսիվ դասընթաց (օրակարգը կցված է)
- վերականգնվող Էներգիայի և Էներգաարդյունավետ նախագծերի մշակում, որոնք կքննարկվեն դասընթացների ժամանակ
- ամփոփիչ համաժողով նոյեմբերին Հայաստանի ամերիկյան համալսարանում

Ցուցահանդես. Ցուցահանդեսը բաց է հանրության համար: Ցուցահանդեսին կմասնակցեն հայաստանյան արտադրողներ, վաճառողներ և ներմուծողներ և կներկայացնեն հայաստանյան շուկայում առկա ջերմամեկուսիչ նյութեր, Էներգախնայող լուսավորության և ջեռուցման համակարգեր, Էներգախնայող դռներ ու պատուհաններ, վերականգնվող Էներգիայի համակարգեր և այլ լուծումներ:

Դասընթացներ. Դասընթացները անվճար են և նախնական գրանցմամբ (դիմումի ձևը կցված է): Դրանք նախատեսված են հետևյալ խմբերի համար՝

- **մարզպետարանների և քաղաքապետարանների** աշխատակիցներ և Էներգետիկ ոլորտի մասնագետներ,
- շինանյութի ներկրողներ կամ վաճառողներ,
- ուսանողներ կամ երիտասարդ մասնագետներ (ճարտարագիտության, ճարտարապետության, շինարարության, քաղաքաշինության, ֆինանսների և ներդրումային կառավարման ոլորտների կամ այլ հետաքրքրված անձինք:)

Դասընթացների ընդհանուր տևողությունը 8 ժամ է: Դասընթացներն անցած մասնակիցներին կշնորհվեն հավաստագրեր:

Ուրախ կլինենք տեսնել քաղաքապետարանի ներկայացուցչներին դասընթացին և հրավիրում ենք համապատասխան ոլորտում աշխատող մասնագետներին գրանցվել և մասնակցել:

Նաև երախտապարտ կլինենք, եթե այս միջոցառման մասին տեղեկացնեք Ձեր քաղաքի ներկայացուցիչներին և հորդորեք իրենց մասնակցել:

Յարգանքով,

Ալեն Ամիրխանյան
Տնօրեն, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Հայաստանի ամերիկյան համալսարան